Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատում է՝

A. համայնքի ղեկավարը.
B. համայնքի ավագանին.
C. Կադաստրի կոմիտեն:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերը պարտադիր գույքագրում են անցնում հետևյալ պարբերականությամբ.

A. հինգ տարին մեկ անգամ.
B. երեք տարին մեկ անգամ.
C. ամենամյա (տարին մեկ անգամ):

Հողերի կառավարման ամենամյա ծրագիրը համարվում է՝

A. համայնքի տարեկան աշխատանքային պլանի բաղկացուցիչ մասը.
B. համայնքի գլխավոր քաղաքաշինական և հողաշինարարական պլանավորման փաստաթուղթ.
C. համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է՝

A. համայնքի ղեկավարը.
B. համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա.
C. համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի առաջարկությամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի փոխանակությունը կատարում է համայնքի ղեկավարը՝

A. լիազոր պետական կառավարման մարմնի համաձայնությամբ.
B. ավագանու համաձայնությամբ՝ հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան.
C. ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

Մինչև համայնքների գլխավոր հատակագծերի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողերի նպատակային նշանակության փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին՝

A. կառավարության սահմանած կարգով՝ հատուկ այդ նպատակով ստեղծված ժամանակավոր միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում, լիազոր պետական կառավարման մարմնի համաձայնությամբ.
B. համայնքի ղեկավարի առաջարկությամբ.
C. ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

Համայնքի գլխավոր հատակագիծը հաստատում է՝

A. Քաղաքաշինության կոմիտեն.
B. ավագանին.
C. համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Քաղաքաշինության կոմիտեն:

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը (այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները և նախագծման առաջադրանքը) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է՝

A. համապատասխան մարզպետը.
B. Քաղաքաշինության կոմիտեն.
C. ավագանին: